ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» օգոստոս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԱՑ-ԳԲԽ-18/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4318-16 և 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Աննա Հակոբյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.11.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/9880-15 և 03.02.2016թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/593-16 գրությունների հիման վրա, 09.02.2016թ. թիվ 1/73-3/4318-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Աննա Հակոբյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 21.03.2016թ. թիվ 01/04.1/1059-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4318-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է Ա/Ձ Աննա Հակոբյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (30.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Մասնակցի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ա/Ձ Աննա Հակոբյանը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ

տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրությամբ վկայակոչելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122.2-րդ կետի դրույթները, Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ա/Ձ Աննա Հակոբյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Աննա Հակոբյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 12.02.2016թ. թիվ 01/04.1/428-16 գրությամբ դիմել է Ա/Ձ Աննա Հակոբյանին, սակայն Մասնակցի կողմից ի պատասխան Կենտրոնի նշված գրությանը՝ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ա/Ձ Աննա Հակոբյանը 06.05.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ա/Ձ Աննա Հակոբյանը «ՇՀԾՁԲ-15/11-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պրատավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, և ի հավաստումն իր դիրքորոշման, Կենտրոնին ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 27.04.2016թ. թիվ 2-913-332 տեղեկանքը, համաձայն որի, ըստ Մասնակցի, Ա/Ձ Աննա Հակոբյանը 30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ա/Ձ Աննա Հակոբյանը, պատշաճ ծանուցված լինելով 18.04.2016թ. ժամը 11:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-18/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 09.11.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/9880-15 և 03.02.2016թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/593-16 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն հայտնել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության կողմից հայտարարված «ՇՀԾՁԲ-15/11-15/9» ծածկագրով ընթացակարգի ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին կետով նախատեսված տվյալների մասին ՀՀ ֆինանսների նախարարության 02.11.2015թ. կատարված հարցմանն ի պատասխան 04.11.2015թ. ստացվել է եզրակացություն, որով արձանագրվել է, որ Ա/Ձ Աննա Հակոբյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 771 383 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 18.04.2016թ. ժամը 11:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-18/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԳԲԽ-18/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4318-16 և 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրություններով ներկայացված Ա/Ձ Աննա Հակոբյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության կարիքների համար՝ գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԾՁԲ-15/11-15/9» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ.*** հայտ է ներկայացրել:

2. Մասնակիցը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.11.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Աննա Հակոբյանին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 02.11.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Աննա Հակոբյանի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 04.11.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Աննա Հակոբյանը ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 771 383 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.11.2015թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է Ա/Ձ Աննա Հակոբյանի հայտը մերժել:

7. Կենտրոնը 21.03.2016թ. թիվ 01/04.1/1059-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է Ա/Ձ Աննա Հակոբյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան

շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել Ա/Ձ Աննա Հակոբյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

9. ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) 27.04.2016թ. Ա/Ձ Աննա Հակոբյանին տրված թիվ 2-913-332 տեղեկանքի համաձայն՝ «ՀԴՄ» սյունակի դիմաց նշված է տուգանք 105,000.0 ՀՀ դրամի չափով:

10. Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 08.07.2016թ. թիվ 01/04.1/2637-16 գրությամբ խնդրել է հայտնել, թե Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

11. Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.07.2016թ. թիվ 6-1/21424-16 գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** չունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-18/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 09.11.2015թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/9880-15 և 03.02.2016թ. թիվ ԱԳ/ԱՌՄ6-1/593-16 գրությունները և կից փաստաթղթերը, Ա/Ձ Աննա Հակոբյանի 06.05.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 27.04.2016թ.

տրված թիվ 2-913-332 տեղեկանքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.07.2016թ. թիվ 6-1/21424-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության կարիքների համար՝ գործազուրկների մասնագիտական ուսուցման կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՀԾԶԲ-15/11-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ.*** հայտ է ներկայացրել:

Մասնակիցը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 02.11.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ա/Ձ Աննա Հակոբյանի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության

կողմից Պատվիրատուին 04.11.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ա/Ձ Աննա Հակոբյանը ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 771 383 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, 04.11.2015թ. ժամը 17:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է Ա/Ձ Աննա Հակոբյանի հայտը մերժել:

Միևնույն ժամանակ Ա/Ձ Աննա Հակոբյանի կողմից Կենտրոնին ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության կողմից 30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) 27.04.2016թ. տրված թիվ 2-913-332 տեղեկանքը, որի «ՀԴՄ» սյունակի դիմաց նշված է տուգանք 105,000.0 ՀՀ դրամի չափով:

Կենտրոնը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված 08.07.2016թ. թիվ 01/04.1/2637-16 գրությամբ խնդրել է հայտնել, թե Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 18.07.2016թ. թիվ 6-1/21424-16 գրությամբ հայտնել է, որ ***Ա/Ձ Աննա Հակոբյանը 30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.07.2016թ. թիվ 6-1/21424-16 գրությունը, համաձայն որի՝ Ա/Ձ Աննա Հակոբյանը ***30.10.2015թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ,*** Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2016թ. թիվ 1/73-3/4318-16 և 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրություններով ներկայացված

Ա/Ձ Աննա Հակոբյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հետևաբար Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2016թ. թիվ 1/73-1/10380-16 գրությամբ նախաձեռնված Ա/Ձ Աննա Հակոբյանին (ՀՎՀՀ՝ 66893365) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-18/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան